

« 11 » նոյեմբեր 2025թ. No 6913 - Ա

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԿԱԴԻԼԱ ՖԱՐՄԱՍՅՈՒՏԻԿԱԼՍ ՍՊԸ, 1389 ՏՐԱՍԱԴ Փ.,
ԴՀՈԼԿԱ- 382225, ԱՀՄԵԴԱԲԱԴ ՇՐՋ., ԳՈՒՋԱՐԱՏ ՍԹԵՅԹ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ,
ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ ԿԱԴԻԼԱ ՖԱՐՄԱՍՅՈՒՏԻԿԱԼՍ
ՍՊԸ, 1389 ՏՐԱՍԱԴ Փ., ԴՀՈԼԿԱ- 382225, ԱՀՄԵԴԱԲԱԴ ՇՐՋ., ԳՈՒՋԱՐԱՏ ՍԹԵՅԹ,
ՀՆԴԿԱՍՏԱՆ «ՆԵՔԻԴՈՆ 5 ՆԵՔԻՎՈԼՈԼ (ՆԵՔԻՎՈԼՈԼԻ ՀԻԴՐՈՔԼՈՐԻԴ)
ԴԵՂԱՀԱՏԵՐ 5ՄԳ; (100/10x10/))» ԲԼԻՍՏԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԻ ՎԵՐԱԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի
փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի՝ դեղերի վերագրանցման
իրականացումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության
որոշմամբ սահմանված փորձագիտական կազմակերպության կողմից:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի
և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային
կազմակերպության կողմից տրված Հնդկաստանի Կադիլա Ֆարմասյուտիկալս ՍՊԸ,
1389 Տրասադ փ., Դիոլկա- 382225, Ահմեդաբադ շրջ., Գուջարատ սթեյթ արտադրության,
դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Կադիլա Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, 1389
Տրասադ փ., Դիոլկա- 382225, Ահմեդաբադ շրջ., Գուջարատ սթեյթ, Հնդկաստան
«Նեքիդոն 5 նեքիվոլոլ (նեքիվոլոլի հիդրոքլորիդ) դեղահատեր 5մգ; (100/10x10/))» դեղի
անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ
փորձագիտական թիվ 23531 առ 03.11.2025թ. բացասական եզրակացության համաձայն
լիարժեք փորձաքննություն իրականացնելու համար անհրաժեշտ նյութերը հայտատուի
կողմից չեն ներկայացվել:

Համաձայն «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի 7-րդ կետի՝
դեղի վերագրանցումը մերժվում է, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

պահանջվող փաստաթղթերից որևէ մեկը կամ նմուշները կամ լաբորատոր փորձաքննության համար անհրաժեշտ նյութերը բացակայում են:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 5-րդ կետի՝ Դեղի վերագրանցումը մերժելը իրականացվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից՝ իրականացված փորձաքննության արդյունքում տրված փորձագիտական եզրակացության հիման վրա:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N1 հավելվածի 52-րդ կետի՝ դեղի վերագրանցման մերժման վերաբերյալ հրամանն ընդունվում է փորձագիտական եզրակացությունը ստանալուց 5 աշխատանքային օրվա ընթացքում:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 27-րդ մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 5-րդ, 7-րդ, 52-րդ կետերով, սահմանված իրավական և վերոգրյալ փաստական հիմքերից ելնելով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Հնդկաստանի Կադիլա Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, 1389 Տրասադ փ., Դիոլկա- 382225, Ահմեդաբադ շրջ., Գուջարատ սթեյթ արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Կադիլա Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, 1389 Տրասադ փ., Դիոլկա- 382225, Ահմեդաբադ շրջ., Գուջարատ սթեյթ, Հնդկաստան «Նեբիդոն 5 նեբիվոլ (նեբիվոլի հիդրոքլորիդ) դեղահատեր 5մգ; (100/10x10/))» բլիստերում դեղի վերագրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ սույն հրամանը երկու աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ



Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157